

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի- 2015թ.

11-12 – րդ դասարաններ

1. Ո՞րքան էլեկտրական էներգիա (կվտ) կարելի է ստանալ 5 տոննա նավթի այրումից (ջերմային գործակիցը 1.5 է): (1 միավոր)
2. Ռուսական « Միոնի » գիտակայանը Հարավային բևեռից հեռու է 2664 կմ, իսկ «Նովոլազարնսկայա » գիտակայանը՝ 1998 կմ:
 - ա) Աշխարհագրական ո՞ր լայնության վրա է « Միոնի » գիտակայանը.
 - բ) Աշխարհագրական ո՞ր լայնության վրա է « Նովոլազարնսկայա » գիտակայանը..... (2 միավոր)
3. Վիճելի տարածք(ներ) Հնդկաստանի և Պակիստանի միջև: (1 միավոր)
4. Թվարկել աշխարհի չորս խոշոր գետ, որոնք ձևավորվում են 2 խոշոր վտակների (ակունքներում) միավորումից: (1 միավոր)
5. Թվարկել ութ պետություն գետերի անուններով, նշելով նաև մայրաքաղաքները: (2 միավոր)
6. Բնութագրել և համեմատել բարեխառն, մերձարևադարձային և արևադարձային գոտիների անապատների կլիմայական պայմանները (նշել նմանությունները և տարբերությունները): (3 միավոր)
7. Գտնել օրինաչափությունը և կազմել համապատասխան եռյակները. (2 միավոր)

Նորվեգիա	-	պղնձաձուլություն	-	Կոնյա
Մալայզիա	-	ոչխարաբուծություն	-	Փոթոսի
Ռուանդա	-	անագի ձուլում	-	Համերֆեստ
Մոնղոլիա	-	փայտաստրոցում	-	Էրդենետ
Թուրքիա	-	ջրաէներգետիկա	-	Նդոլա
Գաբոն	-	այծաբուծություն	-	Իպոխ
Բոլիվիա	-	հնեայի մշակություն	-	Լիբրեիլ
Չամբիա	-	սուրճի մշակություն	-	Կիգալի
8. Ի՞նչ կապ կա տնտեսության զարգացման մակարդակի և բնակչության զբաղվածության կառուցվածքի միջև: (2 միավոր)
9. Որ՞ոնք են նշված լեռնաշղթաների (լեռնաշխարհների) բարձր գագաթները և դրանք դասավորել հարավից հյուսիս ուղղությամբ՝ Ալթայ, Էլբուրս, Պոնտոս, Ուրալյան: (2 միավոր)
10. ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որ՞ոնք են ճիշտ, որ՞ոնք սխալ.
 1. Անասնապահության արտադրանիքի բաժինը զգալիորեն գերակշռում է բուսուսաբուծության նկատմամբ:
 2. Հացահատիկի և կարտոֆիլի մշակությունը ունեն տեղական նշանակություն:
 3. Գյուղատնտեսական հողահանդակներից ամենամեծ մակերեսը զբաղեցնում են վարելահողերը:
 4. Հողաբարելավման գլխավոր եղանակը քիմիական մելիորացիան է:
 5. Կարտոֆիլ մշակվում է բնական բոլոր գոտիների ցանքատարածություններում:
 6. Բուսաբուծության մասնագիտացված ճյուղերից են խաղողագործությունը և պտղաբուծությունը: (3 միավոր)
11. « Ջերմոցային էֆեկտը » պայմանավորված է.
 1. Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտեսիվությամբ,
 2. սառցադաշտերի հալմամբ
 3. մթնոլորտի շրջանառությամբ
 4. մթնոլորտում ջրային գոլորշիների և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ (1 միավոր)

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի- 2015թ.
9-10 –րդ դասարաններ

1. Նավը գտնվում է Ատլանտյան օվկիանոսում հս. լ. 42° 30'-ի և արմ. ե. 50°-ի վրա:
Որոշել նրա հեռավորությունը կիլոմետրով.
ա) հյուսիսային բևեռային շրջագծից
բ) հարավային արևադարձից (2 միավոր)
2. Երկրի բնակչության թիվը 4 մլն. է, բնական աճի գործակիցը 1.5 %: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 14.000 մարդ, իսկ արտագաղթը՝ 6.000: Որոշել ա) բնակչության բնական աճը և բ) բնակչության թիվը մեկ տարի հետո: (2 միավոր)
3. Թվարկել չորս խոշոր գետ, որոնց վտակն ավելի երկար է գլխավոր գետից : (1 միավոր)
4. Թվարկել Ամերիկա աշխարհամասի 4 պետություն, որոնց մայրաքաղաքը երկրի ամենախոշոր քաղաքը չէ: (1 միավոր)
5. Վիճելի տարածք Մեծ Բրիտանիայի և Արգենտինայի միջև: (1 միավոր)
6. Ի՞նչով են տարբերվում միջերկրածովյան և խոնավ մերձարևադարձային կլիմայական մարզերը: (2 միավոր)
7. Ի՞նչ է դաշնային պետությունը և ի՞նչ սկզբունքներով է այն ձևավորվում: (3 միավոր)
8. Ինչո՞վ բացատրել աշխարհագրական համարյա նույն լայնության վրա գտնվող Կալիֆոռնիա և Ֆլորիդա թերակղզիների կլիմայական տարբերությունները: (2 միավոր)
9. Նշված լճային գոգավորությունները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ՝ Խանկա, Էլտոն, Բալատոն, Բայկալ, Իսիկ-Կուլ, Օնեգա, Արալ, Մեծ Ադի: (2 միավոր)
10. Երկրի օրական պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որ՞ոնք են ճիշտ, որ՞ոնք սխալ.
 1. Տարվա եղանակների առաջացումը Երկրի՝ իր առանցքի շուրջը պտույտի հետևանք չէ:
 2. Մեկ ժամում յուրաքանչյուր կետ կատարում է 25°-ի պտույտ:
 3. Ժամային գոտիները սահմանազատվում են գուգահեռականներով :
 4. Երկիրն իր առանցքի շուրջ պտտվում է արևմուտքից արևելք ուղղությամբ :
 5. Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող մարմինները հյուսիսային կիսագնդում իրենց սկզբնական ուղղությունից շեղվում են դեպի աջ:
 6. Երկրի օրական պտույտի հետևանքով Պարանա գետը ողողում է իր աջ ափը: (3 միավոր)
11. Գրել այն երկրների համարները, որոնք ցամաքային են (ելք չունեն դեպի ծով): (1 միավոր)
 1. Եգիպտոս
 2. Չադ
 3. Պերու
 4. Չեխիա
 5. Պարագվայ
 6. Մեքսիկա
 7. Ավստրիա
 8. Լիբանան